600.0393.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016 թվականի №393Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության №ՀՕ-108Ն օրենքի 28-րդ հոդվածը և հաշվի առնելով «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 30-ի №185-c/11/16/Palr գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2011 թվականի մայիսի 4-ի «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №223Ա որոշումը,
   2) 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 4-ի N223Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N110Ա որոշումը,
   3) 2014 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 4-ի N223Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N375Ա որոշումը,
   4) 2015 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 4-ի N223Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N359Ա որոշումը,

5) 2016 թվականի հունվարի 27-ի «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետրիական ընկերության ջրային համակարգի օգտագործման N0018 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու և ընկերությանը նախազգուշացնելու մասին» N12Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.